Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ Լերմոնտովոյի "ՍԿԱԶԿԱ" ՆՈՒՀ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

10.07.2026

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետ
Լերմոնտովոյի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ Լերմոնտովո համայնքի "ՍԿԱԶԿԱ" ՆՈՒՀ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար
Լերմոնտովոյի "ՍԿԱԶԿԱ"մանկապարտեզի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, ՀՀ գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝
1/ բարձրագույն կրթություն
2/հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N02-9 հրամանի 3. մասի 2) կետով սահմանված պահանջները

3/"Նախադպրոցական կրթության մասին" ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշներին բավարարող անձ
4/ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք, Աշխատանքային օրենսգիրք, Գնումների մասին ՀՀ օրենք, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/
5/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
6/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
7/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ, ենթակաների հետ վարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
8/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
Մրցույթը կկայանա հուլիսի 10-ին ժամը 12.00-ին, Լերմոնտովոյի համայնքապետարանի ղեկավարի աշխատասենյակում /հասցե՝ ԼՄ Լերմոնտովո համայնք, 2խճ. Թիվ 5

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում.
2) 1 լուսանկար 3Х4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային

գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/.
6)տեղեկանք մշտական բնակության վայրից
7) հրապարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում.
8) մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 17.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Լերմոնտովոյի համայնքապետարանում :

Հասցե՝ ԼՄ Լերմոնտովո համայնք, 2խճ. Թիվ 5

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
+ 374 77 91 26 40
Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի հուլիսի 03-ն է: